# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<30>> հոկտեմբերի 2013թ. N 386-Ա

ք. Արմավիր

### ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 324-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական կատերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասի, 10-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 17- ի N 906 -Ա որոշումը.

**ո ր ո շ ու մ եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N324-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 63-2.1-1, 63-2.2-(23-24), 63-2.3-(22-23), 63-3.2-(31-34)) անձնագրերի 10 կետի՝
      ա) <<բ>> ենթակետի <<Եկամտահարկի մասին>> բառերը փոխարինել <<Եկամտային հարկի մասին>> բառերով,
      բ) <<Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին>> բառերը հանել.
      գ) հաշվապահական հաշվառման բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 63-2.2-24) անձնանգրի 11-րդ կետի <<իժ>> ենթակետի <<Մարզպետարանի աշխատակիցների պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման>> բառերը փոխարինել <<Մարզպետարանի աշխատակիցների եկամտային հարկի հաշվարկման>> բառերով,
      դ) հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 63-3.2-34) անձնագրի 11-րդ կետի <<ժե>> ենթակետի <<Մարզպետարանի աշխատակիցների պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման>> բառերը փոխարինել <<Մարզպետարանի աշխատակիցների պարտադիր եկամտային հարկի հաշվարկման>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

16. 10. 2009

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2009թ. N 324-Ա

ք. Արմավիր

Ար/ 0325

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասով, 10-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի N 745-Ա որոշումը.

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 63-2.1-(1-4), 63-2.1-(7-8), 63-2.2-17, 63-2.2-(23-32), 63-2.3-(22-37), 63-3.1-(12-14), 63-3.2-(12-13), 63-3.2-29, 63-3.2-(31-37), 63-4.1-3) անձնագրերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Լ. Մուրադյան

Ա. Աղաբաբյան

Փ. Կարապետյան

Ա. Հովհաննիսյան

Կ. Դանիելյան

Ա. Այվազյան

Ա. Ղուկասյան

Ծ. Գրիգորյան

Հ. Հարությունյան

Հ. Բաբայան

Դ. Դավթյան

Յու. Մանվելյան

173